ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԵՐԳԻՋԸ

(Վ. Վ. Մայակովսկու ծննդյան 70-ամյակի առթիվ)

Պ. Տ. ՍԱՀԱԿՅԱՆ

Սովետական մեծ բանաստեղծ Վլադիմիր Մայակովսկու ստեղծագործությունը առանձնահատուկ տեղ ունի սոցիալիստական ռեալիզմի գրականության մեջ։ Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային թափն ու նշանակությունը, նոր հասարակարգ կառուցողի եռանդն ու հոգեբանությունը, հավատն ու վստահությունը կոմունիստական գալիքի նկատմամբ,— այս ամենի գեղարվեստական ինքնատիպ արտացոլումն ապահովեցին այդ ստեղծագործության համաշխարհային նշանակությունն ու անթառամ կյանքը։ Հիրավի, ինչքան հեռանում ենք Մայակովսկուց, այնքան նրա պոեզիան ժամանակակից ու թարմ է թվում, նորովի է հնչում և նոր կողմերով է մասնակցում մեր կյանքին ու պայքարին։ Գաղտնիքն այն է, որ Մայակովսկու պոեզիայի քնարական հերոսը միշտ իրեն զգում է ժողովրդի հետ, կոմունիզմ կառուցողների շարքում.

Ես նրանց հետ եմ,
Որ կառուցելու դուրս եկան.
համատարած տենդում
առօրյայի։
Փառաբանում եմ
հայրենիքս.
որ հիմա կա,
բայց երիցս,
որը պիտ լինի։

Մայակովսկու կյանքի պատմությունը հանրահայտ է։ Հանրահայտ են նաև այն ազդակները, որոնք նրան մղեցին դեպի հեղափոխական պոեզիայի ուղին։ Մայակովսկին դեռ գրական ասպարեզ ոտք չէր դրել, երբ պայթեց 1905 թ. հեղափոխությունը։ 1908—1909 թթ. Մոսկվայում կատարած հեղափոխական աշխատանքը, հանդիպումները բոլշևիկներ Կարախանովի (Վանեա), Վեգերի (Պովոլժեց) և ուրիշների հետ, պրոպագանդիստական աշխատանքն ու բանտարկությունները քաղաքականապես կոփում են «ընկեր Կոստանդինին» (Մայակովսկուն), արթնացնում նրա նիրհող ընդունակությունները։ Ընդհատակյա աշխատանքում և պայքարում Մայակովսկին ձեռք է բերում «ճիշտ վերաբերմունք աշխարհի հանդեպ», զգում «պաթոսը սոցիալիստի, որը գիտի հնի խորտակման անխուսափելիությունը»։ Դա էլ դառնում է կայուն հիմք անկումային դրական հոսանքների հաղթահարման և պոետական ինքնուրույնության հաստատման համար։

Մինչհոկտեմբերյան ստեղծագործության մեջ Մայակովսկին անցնում է բարդ և հակասական մի ուղի, սկսած ֆուտուրիստական ժողովածուներում

տպագրվելուց և ֆուտուրիզմի ստեղծագործական սկզբունքները տեսականորեն ընդունելուց (որոնք ըստ էության խորթ էին նրա պոեզիայի գաղափարական բովանդակությանը) մինչև սոցիալիստական ռեալիզմի հիմնադիր Մաքսիմ Գորկու հետ գրական բարեկամության հաստատումը։

Վաղ շրջանի ստեղծագործություններում Մայակովսկին Գորկու նման հեղափոխական բոմբ է բարձրացնում բուրժուական հակամարդկային կարգերի դեմ, գայրույթով մերժում է քաղքենիական բարոյական չափանիշներն ու կենցաղը։ Շարունակելով Նեկրասովի երգիծական սրագիցիաները, «Ա՛յ ձեզ» ոտանավորում նա դառնությամբ և վրեժով է խոսում կյանքի տերերի մասին, որոնք լողում են բարեկեցության մեջ, որոնց խորթ են մարդկային քնքույշ զգացմունքները, պոետի հումանիստական տառապանքը։ Նրանք բոլորն էլ կրկնակոշիկներով և առանց կրկնակոշիկների, կեղտոտ ոտներով կոխոտում են երգչի «սրտի թիթեռնիկին» և հանում նրան համբերությունից։ 1913 թ. գրված «Վլադիմիր Մայակովսկի» ողբերգությունում բացահայտվում է մարդու դիմազրկման և աղճատման սոսկալի պատկերը։ Պոետի մոտ գալիս են կապիտալիստական հասարակարգի կողմից խեղված, խեղանդամված մարդիկ, բերելով նրան իրենց տառապանքի արցունքները։ Բուրժուական քաղաքում Մայակովսկին հայտնագործում է ահռելի մի վիշտ և հարյուրավոր մանր վշտեր։

Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում լայնորեն տարածված շովինիզմին և միլիտարիզմին Մայակովսկին հակադրում է հումանիզմը և պատերազմի դատապարտումը։ 1914—1917 թթ. նա ստեղծում է հակապատերազմական ցիկլի իր բանաստեղծություններն ու պոեմները («Մայրիկը և դերմանացիների կողմից սպանված երեկոն», «Պատերազմը հայտարարված է», «Ձեզ») և նշանավոր «Հիմն»-երը, որոնցում մերկացնում է պատերազմի հանցագործներին և իշխող վերնախավին։ «Պատերազմը և աշխարհը» պոեմում Մայակովսկին ստեղծում է իմպերիալիստական պատերազմի ցնցող պատկերը, բոլոր գույները վերցնելով իրական կյանքից։ Պատերազմի դաշտը նա նմանեցնում է մի սպանդանոցի։ Հարավից Պոլիսն է «մորթվածներին փսխում դեպի Բոսֆոր։ իսկ սանիտարական գնացքի վագոնում քառասուն վիրավոր ունեն ընդամենը չորս ոտք։ Պատերազմի արյունոտ բաղնիքի տեսքը ստիպում է վիրարույժներին հերձել սպանված մի զինվորի, պատերազմի պատճառն ըմբռնելու համար, և նրանք տեսնում են զինվորի հոգում մխրճված ոսկեթաթ միկրոբը՝ ռուբլին։

1915 թ. Մայակովսկին գրում է իր ծրագրային պոեմը՝ «Վարտիքավոր ամպը», որն ամբողջովին համակված է «մոտալուտ հեղափոխության գիտակցությամբ»։ Հեղափոխական թեմատիկան այստեղ արտահայտվում է ոչ միայն պոետի և բուրժուական իրականության հակադրության միջոցով, այլև այդ հակադրության հեղափոխական լուծմամբ։ Մայակովսկին այս պոեմում հանդես է գալիս որպես հեղափոխության մունետիկ և ողջույնի խոսքերով է դիմավորում նրա գալստյան ժամանակը.

Ես,
ծաղրվա՛ծս այսօրվա ցեղից անհոգի,
որպես մի երեա՛ր
անպարկեշտ անեկդոտ,
տեսնում եմ ժամանակի սարերովն եկողին,
որին չի տեսնում ոչ ոք։
Ուր մարդկանց հայացքն է հատվում պոչատ,

սոված ամբոխների գլուխների վրան՝
ռևոլյուցիաների պըսակով փըշապատ
տասնըվեց թվականն է գալիս հուրհրան։

Թեև Մայակովսկին իր պոեմում չի պատկերում, թե ինչպիսի՛ն պիտի լինի այդ հեղափոխությունը, ի՛նչ ուղիներով պետք է կենսագործվի այն և ի՛նչ հարցեր պետք է լուծի, այնուամենայնիվ, նա հեղափոխության մեջ է տեսնում ելքը դառն, ողբերգական կյանքից և պատրաստակամություն է հայտնում իրեն ամբողջովին նվիրաբերելու նրա իրականացմանը.

Եվ երբ՝
գալուստը նրա,
ազդարարեք խռովությամբ։
Դեմ ելնեք փրկչին, ճչա՛ք —
ես ձե՛զ —
կըպոկեմ հոգիս,
կըոտնահարեմ,
որ լինի մե՛ծ —
և կտամ՛ արյունոտված՝
որպես դրոշակ։

Պոետի հումանիստական այս կերպարը, որն արյունոտված հոգին դրոշակ է դարձնում մարդկանց փրկելու համար, արձագանքում է Գորկու հերոս Դանկոյի կերպարին, որն իր սիրտը որպես ջահ բարձրացնում է վեր՝ մարդկանց կործանումից փրկելու համար։ Միանգամայն բնական էր Գորկու հուզումը, երբ նա լսեց «Վարտիքավոր ամպը» Մայակովսկու ընթերցմամբ, 1915 թ. Մուստամյակիում։ Գորկին հանգում է այն եզրակացության, որ «Մայակովսկին որոնում է միաձուլում ժողովրդական մասսաների հետ և իր «ես»-ը ըմբռնում է սոսկ որպես մասսաների միմվոլ, որին մինչև հատակը բարձրացրել ու ալեկոծել է պատերազմը»[1]։ Անջատելով Մայակովսկուն ֆուտուրիստներից, Գորկին նրան համարում է տաղանդավորագույն, խոշորագույն պոետ, խոսում է նրա վիթխարի թափի մասին։

Մայակովսկու նախահոկտեմբերյան մյուս պոեմները՝ «Ողնաշարի սրընգափողը» (1915), «Մարդ» (1917), կարծես կրկնում են «Վարտիքավոր ամպ»-ի առանձին մոտիվները և բացահայտում հումանիստ պոետի և բուրժուական իրականության միջև գոյություն ունեցող հակադրության խորությունը։ «Ողնաշարի սրնգափողը» պոեմում բանաստեղծը շարունակում է «Վարտիքավոր ամպ»-ի առաջին մասում արտահայտած սիրո ողբերգականության թեման։ «Մարդ» պոեմը, որ հեղինակն ավարտել ցարական ինքնակալության տապալման նախօրյակին, ինքնատիպ ձևով շարունակում է Գորկու համանուն երկի թեմատիկ-գաղափարական տրադիցիան։ Դեռևս դարասկզբին Գորկին մտահղացել էր «Մարդ» արձակ պոեմը, որը պետք է բաղկացած լիներ երկու մասից. առաջինում պետք է փառաբանվեր աշխատող և ստեղծագործող մարդը, իսկ երկրորդում պատկերվելու էր կյանքի տերը՝ քաղքենին, որը գողունի հետևում է մարդուն և յուրացնում նրա աշխատանքի պտուղները. «Եվ եթե Մարդը երկնքից առևանգում է կրակը, Քաղքենին այդ կրակով լուսավորում է իր ննջարանը և օգտագործում այն իբրև երթևեկության միջոց, չհրաժարվելով միա-

[1] «Звезда», 1944, № 4, էջ 85։

ժամանակ դեպի իր բարեկեցությունը շարժվելու հին և հարմար միջոցից՝ մերձավորի պարանոցին հեծած ճանապարհելուց»[2]։ Գորկին կարողացավ իրագործել իր մտահղացման միայն առաջին մասը, որը լույս տեսավ 1904 թ.։ Ի դեպ, այն անմիջապես թարգմանվեց հայերեն ու տպագրվեց «Մշակ» պարբերականում։ Մարդու կերպարը Գորկու պոեմում ողբերգականորեն գեղեցիկ էր։ Զինված լինելով միայն բանականությամբ, ամենազոր մտքով, նա պայքարի էր ելնում կյանքի անարդար կառուցվածքի դեմ։

Շարունակելով բուրժուական կարգերի մերկացման գորկիական գիծը, Մայակովսկին աշխատանքի մարդուն պատկերում է որպես արևի, լույսի մուներեկ։ Նրա հակառակորդը այստեղ ևս քաղքենին է, «ճաղատը»։ Փողի ուժով այլասերելով ամեն ինչ, նա անայլայլ նստած է ծաղկաղարդ գորգին՝ նուրբ գուլպաներ և պենամոլի անդրավարտիք հագած, թեև նրա շուրջն ամեն ինչ կործանվում է։

Առաջին ռուսական հեղափոխության նախօրյակին բարձրացնելով մարդու թեման, Գորկին շեշտը դնում էր նրա մտքի տիտանական ուժի վրա, որը կաշկանդված էր բուրժուական հասարակարգի պայմաններում։ Հանդես գալով Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին, Մայակովսկին շեշտը դնում էր այդ մարդու սրտի, զգացմունքների վրա, մատնանշելով նրա լցված, ոտնահարված պատկերը բուրժուական իրականության մեջ։ Երկու դեպքում էլ մեծ գրողները դնում էին մարդու հեղափոխական ապատադրման հարցը։

Փետրվարյան հեղափոխության օրերին Մայակովսկին ավտոդպրոցի վիճվորների հետ ակտիվ մասնակցություն է ունենում ցարիզմի տապալման իրադարձություններին։ Նա գրում է «Ռևոլյուցիա» պոեմախրոնիկան, որտեղ ողջունում է բանվորական ջրհեղեղի առաջին օրը, հասկացնելով, որ դրան հաջորդելու է երկրորդը։ «Հեքիաթ Կարմիր գլխարկի մասին», «Պատասխանատվության» բանաստեղծություններում Մայակովսկին մերկացնում է բուրժուազիային և դատապարտում ժամանակավոր կառավարության պատերազմի քաղաքականությունը։ Հոկտեմբերյան հեղափոխությունից մի ամիս առաջ նա գրում է հայտնի երկտողը՝

Ешь ананасы,
рябчиков жуй!
День твой последний
приходит, буржуй!

որը հոկտեմբերյան օրերին նավաստիները երգում էին Ձմեռային պալատը գրոհելիս։

Սոցիալիստական հեղափոխությունը Մայակովսկին որպես քաղաքացի և պոետ ընդունում է անառարկելիորեն և նրա պայծառ դրոշին հավատարիմ է մնում մինչև վերջ։ Մայակովսկու ինքնակենսագրության մեջ 1917 թ. «Հոկտեմբեր» վերնագրի տակ գրված է. «Ընդունե՞լ, թե չընդունել։ Այսպիսի հարց ինձ համար գոյություն չուներ։ Իմ ռևոլյուցիան է։ Գնացի Սմոլնի։ Աշխատում էի։ Անում, ինչ որ լինում էր»[3]։ Մայակովսկին ամբողջովին նվիրվում է սոցիալիստական կուլտուրայի կառուցման աշխատանքին, մերթ կազմակերպելով

---

[2] М. Горький, Собрание сочинений в 30 томах, т. V, էջ 489։
[3] Վ. Մայակովսկի, Ընտիր երկեր, հատ. 1, էջ 39։

գեղարվեստական հրատարակչություններ, եռուն աշխատանք ծավալելով Լուսժողկոմատի կերպարվեստի բաժնում, մերթ գրելով կինոսցենարներ, խաղալով ֆիլմերում, մերթ հանդես գալով իր բանաստեղծությունների հրապարակային ընթերցումներով։ Մայակովսկու բանաստեղծական խոսքը կարողանում է հասնել հեղափոխության հաղթական վազքի հետևից և վերարտադրել նրա բոլոր շրջադարձերն ու փուլերը։ Քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի տարիներին, երբ երկրի բոլոր ուժերը նետված էին ռազմաճակատ, Մայակովսկին գրում է Հոկտեմբերի հաղթական երթը գրվատող բանաստեղծություններ՝ «Ս ե ր քայլերգը», «Զախ մարշ», «Ցնցող փաստեր», «Ներրող հեղափոխությանը», «Երրորդ ինտերնացիոնալ», «Ընկերական ողջույնով՝ Մայակովսկի» և այլն, մի շարք մեծ կտավի գործեր՝ «Միստերիա-Բուֆֆ», «150 000 000», բանաստեղծական մակագրություններ ՌՈՍՏԱ-ի պատուհաններում և տասնյակ այլ ստեղծագործություններ։

Հեղափոխական բովանդակության և ձևի ներդաշնակության առաջին փայլուն նմուշն իրավամբ համարվում է «Զախ մարշ» հռչակավոր բանաստեղծությունը, որը թարգմանված է աշխարհի համարյա բոլոր լեզուներով։ Այն իրոք հաղորդում է կազմակերպված կարմիր զորադնդերի, միլիոնավոր ռազմիկների դյուցազնական թափը, նրանց հաղթական քայլքի ռիթմիկ ոտնաձայնը, որից փլվում են հին աշխարհի կամուրջները։

Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարեդարձի տոնակատարության օրերին՝ 1918 թ. նոյեմբերի 7-ին, 8-ին և 9-ին մեծ հաջողությամբ բեմադրվեց «Միստերիա-Բուֆֆ» պիեսը, որը դարձավ սովետական դրամատուրգիայի առաջնեկը։ Հեղափոխությունն այստեղ ներկայացված է ջրհեղեղի ծավալուն այլաբանական պատկերով։ Ինքնակալության և ժամանակավոր կառավարության սկզբունքները մարմնավորված են յոթ զույգ «մաքուրների», իսկ հեղափոխական ժողովուրդը՝ յոթ զույգ «անմաքուրների» կերպարներում։ Այդ երկու հակադիր սոցիալական ուժերի պայքարը կազմում է պիեսի կոնֆլիկտը, իսկ ճանապարհորդությունը տապանով դեպի Ավետյաց երկիրը այլաբանորեն ներկայացնում է հեղափոխության անցած ուղին փետրվարյան օրերից մինչև կոմունիզմի կառուցումը։ Այլաբանությունը գեղարվեստականորեն կոնկրետ. մասսաներին մատչելի ձևով հաղորդում է երկի պատմական, քաղաքական բարդ բովանդակությունը։ Պոետը համարձակ կերպով հեղափոխության հերոսական, հանդիսավոր, միստերիալ պատկերումը զուգակցում է հնի կործանման կոմիկական բուֆոնադայի հետ։ Դրականորեն գնահատելով «Միստերիա-Բուֆֆը», Լունաչարսկին ասաց, որ դա «...հեղափոխական ջրհեղեղից հետո աստիճանաբար իր պորտարույծներից ազատագրվող բանվոր դասակարգի ուրախ, սիմվոլիկ ճանապարհորդությունն է դրախտի և դժոխքի միջով դեպի Ավետյաց երկիրը, որը, ինչպես պարզվում է, մեր մեղապարտ երկիրն է, միայն թե՝ լվացված հեղափոխական ջրհեղեղով, և որտեղ բոլոր «ընկեր իրերն» անհամբեր սպասում են իրենց եղբորը՝ աշխատավոր մարդուն։ Եվ գրված է այդ ամբողջը սուր, համեմված, հնչեղ լեզվով»[4]։

«Միստերիա-Բուֆֆ» պիեսը, ըստ Մայակովսկու, կարող է պահպանել իր հրատապությունն ու թարմությունը, եթե յուրաքանչյուր ժամանակի ոգուն համապատասխան փոփոխություններ մտցվեն նրանում, հին թշնամիների

[4] Բերված է ըստ Ա. Ֆեվրալսկու „Маяковский — драматург" գրքի, Մոսկվա, 1940, էջ 23։

փոխարեն դրվեն նորերը։ Այդպիսի փոփոխություններ կատարեց ինքը պիեսի երկրորդ խմբագրությունում՝ Կուպեցին փոխարինելով Սպենկուլյանտով, Հասա ֆրանսիացուն՝ Կլեմանսոյով, Իտալացի սպային՝ Լլոյդ Ջորջով, իսկ Ուսանողին՝ Դիպլոմատով։ «Անմաքուրների» մեջ նա ավելացրեց Կարմիր բանակային և Մեքենավարին։ «Միստերիա-Բուֆֆը»,—գրում է Մայակովսկին,—ճանապարհ է, հեղափոխության ճանապարհը։ Ոչ ոք ճշգրտորեն չի կանխատեսի, թե դեռևս ինչ լեռներ է վիճակվելու պայթեցնել մեզ՝ այդ ճանապարհով քայլողներիս։ Այսօր ականջ է ծակում «Լլոյդ-Ջորջ» բառը, իսկ վաղը նրա անունը կմոռանան և իրենք՝ անգլիացիները։ Այսօր դեպի կոմունա է պոռթկում միլիոնների կամքը, իսկ կես հարյուրամյակ հետո, կարող է պատահել, հեռավոր մոլորակների վրա գրոհով կնետվեն կոմունայի օդային դրեղնոուտները։ Այդ պատճառով, թողնելով ճանապարհը (ձևը) ես կրկին փոխեցի բնակարի մասերը (բովանդակությունը)։ Ապագայում բոլոր խաղացողնե՛ր, բեմադրողնե՛ր, ընթերցողնե՛ր, «Միստերիա-Բուֆֆը» տպագրողնե՛ր, փոխեցե՛ք բովանդակությունը, դարձրեք նրա բովանդակությունը այսօրվա, այս բոպեի»[5]։

Հեղափոխության ապագա հաղթանակների պատկերը դրսևորվում է ոչ միայն «Միստերիա-Բուֆֆ» պիեսում, այլև գեղարվեստական այնպիսի մի մեծ կտավի գործում, ինչպիսին «150 000 000» պոեմն է։ Այս երկի հիմքում ընկած է կապիտալիստական սիստեմի և հեղափոխական Ռուսաստանի համաշխարհային գոտեմարտը, որն ավարտվում է հեղափոխական ուժերի հաղթանակով։ Սակայն այս պոեմում դեռևս իշխում էր կերպարների կերտման պլակատային մեթոդը, սխեմատիզմը։ Միլիոնների պատկերման գեղարվեստական վարպետությանը Մայակովսկին դեռ չէր հասել։

«150 000 000» պոեմը գրելիս Մայակովսկին եռանդուն աշխատանք էր ծավալել ՌՈՍՏԱ-ում, 1919 թ. աշնանից սկսած ձեռանկար պլակատների, ծաղրանկարների և երգիծանքի միջոցով հարվածելով սպիտակ գվարդիականներին և օտարերկրյա ինտերվենտներին։ Նկարիչ Ջերյոմինիի հետ միասին Մայակովսկու պատրաստած 900 պատուհաններում (որոնցից մեզ հասել է ավելի քան 500-ը) հրապարակվում են բազմապիսի չափածո գործեր՝ երգեր, կոչեր, քառյակներ, հեքիաթներ, հանելուկներ, լոզունգներ, պարոդիաներ, որոնք տոգորված են հեղափոխական պաթոսով։ ՌՈՍՏԱ-ի պատուհաններում, Գլավպոլիտպրոսվետում հրապարակած բանաստեղծություններում, հոկտեմբերյան շաստուշկաներում և ռոմանսներում Մայակովսկին զարգացնում է Հոկտեմբերյան հեղափոխության թեման՝ կոնկրետ իրադրության պայմաններում։

Բայց ահա ավարտվում են քաղաքացիական կռիվները և օտարերկրյա ինտերվենցիան, աստղակիր կարմիր լավան դուրս է շպրտում հակահեղափոխական ուժերին Ղրիմից, երկրում սկսվում է տնտեսության վերականգնումը, նոր տնտեսական քաղաքականությունը, և Մայակովսկին իր բանաստեղծական տաղանդը ծառայեցնում է նոր համաժողովրդական խնդիրների լուծմանը։

Մայակովսկին խաղաղ շինարարության առօրյա գործերում տեսնում է հեղափոխության շունչը, նրա խորացումն ու ծավալումը։ Նոր տնտեսական քաղաքականությունը, պետական առևտրի ծավալման հարցը, քայքայված տնտեսության վերականգնումը նա համարում է պատասխանատու ոաղմա-

[5] В. В. Маяковский, Полное собрание сочинений в 12 томах, М., 1939—1949, т. III, էջ 97։

ճակատ, լծվում է կոմունիստական պարտիայի մեծ նախագծումների իրականացմանը և չի խորշում ամենասև աշխատանքից, պարծանքով հայտարարելով.

Ես ջրկիր եմ
ու աղրահան,
Ռևոլյուցիայով
կանչված ու կոչված...

Չկա որևիցե խոշոր քաղաքական պրոբլեմ և առաջին հայացքից մանր թվացող հարց, որ չդրավի նրա ուշադրությունը, նյութ չծառայի նրա ստեղծագործությանը։ Մայակովսկին կյանքի ու կենցաղի խոշոր և մանր երևույթներին մոտենում է սոցիալիստական հեղափոխության և կոմունիզմի կառուցման չափանիշով, որի շնորհիվ նրան հաջողվում է հեղափոխական ռոմանտիզմի կանխատեսման ուժով արտացոլել անգամ մեր ժամանակներին վերաբերող շատ ու շատ հարցեր։ Ահա թե ինչու Մայակովսկի-պոետի համար վիրավորական չէր սովետական առևտրական կազմակերպություններին օգնելը, Մոսսելպրոմի, Ռեկլինոտրեստի համար ռեկլամային բանաստեղծական տողեր հորինելը, սանիտարական պլակատներ, անգրագիտության վերացման վերաբերյալ բանաստեղծություններ գրելը։ Այս բնագավառում էլ դրսևորվում է նրա սրամտությունը, պոետական պատկերների և գործերի ինքնատիպությունը։

Քաղաքացիական կռիվների հաղթական ավարտումից հետո Մայակովսկու ստեղծագործությունն ընթանում է հիմնականում երեք պլանով սովետական հասարակարգի ներքին թշնամիների՝ քաղքենիության, բյուրոկրատիզմի, կարիերիզմի և այլ մնացուկների մերկացում. միջազգային իմպերիալիզմի դիմակազերծում. սովետական ժողովրդի հերոսական աշխատանքի ու նվաճումների փառաբանում։

Հին հասարակարգի տապալման և նոր հասարակարգ կառուցողի մասին Մարքսը գրել է. «...ինչպես այդ կոմունիստական գիտակցության մասսայական ծնունդի, նույնպես և բուն նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մարդկանց մասսայական վերափոխում, որը հնարավոր է միայն պրակտիկ շարժման, հեղափոխության մեջ. հետևաբար, հեղափոխությունն անհրաժեշտ է ոչ միայն նրա համար, որ ուրիշ ոչ մի միջոցով հնարավոր չէ իշխող դասակարգը տապալել, այլև նրա համար, որ տապալող դասակարգը միայն հեղափոխության մեջ կարող է ազատվել ամբողջ հին նողկանքից և ընդունակ դառնալ նոր հասարակարգ կառուցելու»[6] (ընդգծումը Մարքսինն է—Պ. Ս.)։ Լինելով հեղափոխության խանդավառ մունետիկ, Մայակովսկին շատ լավ էր տեսնում ոչ միայն «հին նողկանքի» քարացած դրսևորումները, այլև նրա ճըկումն, կենսունակ ձևափոխությունները, կյանքի նոր պայմաններին հարմարվելու ճիգերը։ Բուն հեղափոխության խնդիրը նա համարում էր ռեսպուբլիկան հին կեղտից մաքրելը, մարդկանց հոգեբանության վերափոխումը։

1921 թ. լույս տեսավ Մայակովսկու «Անպետքության մասին» բանաստեղծությունը, որով բացվեց պոետի երգիծական ստեղծագործությունների ցիկլը։ Այն պատկերում էր քաղքենի ամուսիններին, որոնք հեղափոխությունից հետո փոխել են փետուրները, «Իզվեստիա» են ստանում, պատից կախել են Մարքսի

[6] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IV, М., 1938, էջ 60։

նկարը, ըստ էության հոդ տանելով միայն իրենց բարեկեցության և «շփացած դեղձանիկի» մասին.

Ռևոլյուցիան խճճել են օրիվատելյան թելերը։
Օրիվատելյան կենցաղը սարսափելի է Վրանգելից։
Իսկույն
ոլորեցեք դեղձանիկների գլուխները,
որ կոմունիզմը չպարտվի
դեղձանիկներից։

Նէպին անցնելու շրջանում քաղքենիությունը հանդես է գալիս նոր փետրավորմամբ՝ բյուրոկրատիզմի արտաքինով։ Մայակովսկին «Իզվեստիայի» 1922 թ. մարտի 5-ի համարում հրապարակում է «Ժողովամոլներին» հանրահայտ բանաստեղծությունը։ «Ժողովամոլներին» բանաստեղծությանը Վլադիմիր Իլյիչ Լենինի տված բարձր գնահատականը բացում է բոլոր պարբերականների դռները Մայակովսկու առջև և սրում նրա ուշադրությունը կյանքի բացասական երևույթների նկատմամբ։ Նրա երգիծական բանաստեղծությունների լոկ վերնագրերի թվարկումն արդեն ընդհանուր պատկերացում է տալիս դրանց թեմատիկ-գաղափարական շրջանակների մասին. «Խառնաշփոթություն», «Բյուրոկրատիադա», «Խուլիգանշչինա», «Ընդհանուր ձեռնարկ սկսնակ քծնողների համար», «Երկչոտը», «Իդիլիա», «Այուն», «Պոմպադուր», «Կեղծապաշտը», «Հատուկ կարծիք» և այլն։ Բոլոր այդ գործերը ոչ միայն բացասող, այլև հաստատող ուժ ունեն։ Սովորաբար երկն սկսելով բացասական փաստի քննադատությամբ, Մայակովսկին այն ավարտում է դրականը հաստատող կրքոտ կոչով։ Բանաստեղծն առանձնապես բարոյական բարձր պահանջներ է ներկայացնում երիտասարդությանը, որովհետև անփորձ լինելով, նա ավելի շուտ է ենթարկվում կողմնակի, խորթ ազդեցություններին։ «Սիրում եմ» և «Այդ մասին» պոեմները, ինքնակենսագրական բնույթով հանդերձ, բարձրացնում են սիրո, բարոյականության, երիտասարդության նոր կենցաղի հարցերը։

Երգիծական բանաստեղծությունների երկու հիմնական թեմաները՝ բյուրոկրատիզմի և քաղքենիության մերկացումը, ընկած են նաև 1928—1929 թթ. գրված «Փայտոջիլ» և «Բաղնիք» պիեսների հիմքում. «Փայտոջիլ» պիեսի երգիծական կերպարների կերտման միջոցով (Ռոզալիա Պավլովնա, Օլեգ Բայան, Պրիսիպկին) Մայակովսկին ներկայացնում է քաղքենիության զազրելի դեմքը 1920-ական թվականներին և այն ահավոր տպավորությունը, որ կթողնի նա մարդկանց վրա տասը հնգամյակ հետո։ Ապագա հասարակությունը Պրիսիպկինին տեղավորում է գաղանանոցի առանձին վանդակում՝ «Օրիվատելյուս վուլգարիս» («սովորական քաղքենի») մակագրությամբ և հետևյալ նախազգուշացումներով. «Զգուշացի՛ր, թքում է», «Պահպանեցե՛ք ձեր ականջները, նա հայհոյում է»։ Նրա կողքին տեղավորում են Փայտոջիլին՝ «Կլոպուս նորմալիս» («սովորական փայտոջիլ») մակագրությամբ՝ ցույց տալով երկուսի միջև եղած ընդհանրությունը։ Ինչպես բացասական կերպարների կերտման, նույնպես և նրանց ու ապագա հասարակարգի հակադրման միջոցով պիեսը ուսուցանում է, որ հեղափոխության մեջ մարդու վերափոխման պրոցեսն ավարտված չէ, որ հեղափոխությունը խրամատային, տեսական պայքար պետք է ծավալի «շերտավոր ադրի» պրիսիպկինության դեմ։

Պրիսիպկինությունը՝ սոցիալիստական հեղափոխության մեծ սկզբունքներին դավանանելը արտահայտված էր ոչ միայն դասակարգից պոկվելու և

քաղքենիական ճահճում խրվելու ձևով, այլև ձևականորեն դասակարգի շարքերում մնալու և նրանից բյուրոկրատական պատնեշով մեկուսանալու, այլասերվելու ձևով։ Այս պրոբլեմն է Մայակովսկին բարձրացնում «Բաղնիք» պիեսում։ Խոշոր բյուրոկրատ Պոբեդոնոսիկովի և մանր բյուրոկրատներ Օպտիմիստենկոյի, Մեղալյանսովայի, Իվան Իվանովիչի, Մոմենտալնիկովի կերպարներին այստեղ հակադրվում են դրական հերոսները՝ Վելոսիպեդկինը, Զուդակովը, Ֆոսկինը, Դվոյկինը, Պոլյան, Ֆոսֆորային կինը՝ կոմունիստական հասարակարգի առաքյալը։ Առաջինները դուրս են շպրտվում ժամանակի մեքենայից և չեն տարվում կոմունիստական հասարակարգ։

Մայակովսկու երգիծական ստեղծագործությունները, տոգորված լինելով պայծառ լավատեսությամբ, ցույց են տալիս, թե ինչպես սոցիալիզմի երկիրը քննադատության և ինքնաքննադատության «բաղնիքում» թողնելով հնի կեղտը՝ քաղքենիությունը, բյուրոկրատիզմը, այնտեղից դուրս է գալիս մաքրված, գեղեցկացած, կոմունիզմի վեհ գաղափարներով պայծառացած։

Մայակովսկու հետհոկտեմբերյան ստեղծագործության երկրորդ առանցքային թեման միջազգային իմպերիալիզմի մերկացումն է։ Բուրժուական հասարակարգի անմարդկային էությունը նա զգացել էր դեռ մինչև հեղափոխությունը, երբ դեմ առ դեմ բախվել էր քաղքենու՝ հղփացած «Ճաղատի» բիրտ, գռեհիկ ուժին։ Սակայն այդ ժամանակ բանաստեղծը դեռևս չուներ դիտակետի այն բարձրությունը և դրական իդեալի այն քաղաքական հստակությունը, որ նա ձեռք բերեց Մեծ Հոկտեմբերի շնորհիվ։ Այդ պատճառով էլ նրա երգիծանքը հայտնի չափով վերացական էր և անհետևողական։ Հետագայում ՌՈՍՏԱ-ի պատուհաններում նա մեծ տեղ է հատկացնում կապիտալիստական աշխարհի երգիծական մերկացմանը, իսկ 1923 թ. լույս է ընծայում «Մայակովսկիական գալերեյա» բանաստեղծական պամֆլետների գիրքը, որտեղ գծում է Ստիններսի, Պուանկարեի, Քերզոնի, Պիլսուդսկու, Մուսոլինիի գրոտեսկային կերպարները։

1922—1929 թթ. ինն անգամ լինելով արտասահմանում, ծանոթանալով Ֆրանսիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Կուբայի, Մեքսիկայի, ԱՄՆ-ի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի կյանքին և համեմատելով դրանք երիտասարդ սովետական երկրի հետ, Մայակովսկին տեսնում է այնտեղ գոյություն ունեցող թե՛ լավը և թե՛ վատը։ Լավը միշտ առնչվում է ժողովրդի ստեղծագործական աշխատանքի և տեխնիկայի նվաճումների հետ, վատը՝ մասնավոր սեփականատիրության ստեղծած աղաղակող անհավասարության, աշխատանքի շահագործման, աշխատավորի իրավունքների ոտնահարման և առհասարակ անարդարացի սոցիալական կարգերի հետ։ «Սովորիր եվրոպական տեխնիկան, սակայն կաղմակերպիր այն քո հեղափոխական կամքով—ահա Եվրոպան դիտելուց արած եզրակացությունը»[7]։

Մայակովսկին տեսնում է, թե հեղափոխության շնորհիվ, մարդկային հասարակարգ կառուցելու տեսակետից որքա՜ն առաջ է անցել իր հայրենիքը բուրժուական աշխարհից. և կապիտալիստական կարգերի մերկացումը նրա մոտ զուգակցվում է մի կողմից քաղաքացիական հպարտության, մյուս կողմից՝ արհամարհանքի հետ դեպի իմպերիալիստական կենսակերպը («Նորդերնեյ», «Բրուկլինյան կամուրջ», «Փարիզուհին», «Երկնաքերն ըստ կտրվածքի», «Բլեկ

7 Վ. Մայակովսկի, Ընտիր երկեր, հատ. 2, էջ 339։

էնդ ուայտ», «Օրիորդը և Վուլվորտը», «Սիֆիլիս», «Կեմպ նիտ Գեղայգն» և այլն)։ Այս հայրենասիրական առողջ զգացմունքը վիթխարի ուժով արտահայտվել է ամբողջ աշխարհին հայտնի «Բանաստեղծություն սովետական պասպորտի մասին» ստեղծագործությունում։

Մայակովսկու արհամարհանքը դեպի բուրժուական կարգերը բխում էր նաև այն համոզմունքից, որ քաղաքական ինքնագիտակցության եկած աշխատավոր և շահագործվող մասսան վաղ թե ուշ կտապալի կապիտալի իշխանությունը և ազատություն ձեռք կբերի.

Մարին
կհետևեն բառերը,
բառերին՝ գործերը,
և տեսար
տանիքներից երկնաբերների,
ճոճելով,
սալահատակին են զարկում
դիակները
Վանդերլիպի,
Ռոկֆելլերի
և Ֆորդերի։

Քաղաքացիական կռիվներից հետո Մայակովսկու ստեղծագործության մեջ իշխող է դառնում սովետական մարդկանց հերոսական աշխատանքի և ամենօրյա նվաճումների պատկերումը։ Սկսած «Քաղաքացիական կռվի վերջին էջը» բանաստեղծությունից մինչև «Ընկեր Նետտեին, շոգենավին և մարդուն», «Զուլող Իվան Կոզիրևի պատմածը», «Պատմություն Կուզնեցկստրոյի և Կուզնեցկի մարդկանց մասին» հիասքանչ գործերը, Մայակովսկին հետևողականորեն անդրադառնում է սովետական նոր մարդու, ժամանակի դրական հերոսի բնավորության տիպական գծերի պատկերմանը, որոնք դրսևորվում են խաղաղ աշխատանքում և պայքարում։

Պատմականորեն մոտենալով այդ հարցին, Մայակովսկին տրամաբանորեն հանգում է ժամանակի «ամենամարդկային մարդու» և պրոլետարիատի հանճարեղ առաջնորդի՝ Վլադիմիր Իլյիչ Լենինի կերպարի գեղարվեստական մարմնավորմանը։ Դրական հերոսի ստեղծագործական նախորդ բոլոր որոնումները ավարտվում են Լենինի հերոսական կերպարի կերտմամբ։ Լենինի աշխատություններին Մայակովսկին ծանոթացել էր վաղուց։ Հետագայում, մասնավորապես ՌՈՍՏԱ-ին աշխատակցելու շրջանում, ուշադիր հետևելով Լենինի ելույթներին, Մայակովսկին նրանցում ստեղծագործական անսպառ նյութ է գտնում։ Այդ ժամանակ էլ նա Լենինի կերպարը վերարտադրելու առաջին փորձն է կատարում, 1920 թ. Լենինի ծննդյան 50-ամյակի առթիվ գրելով «Վլադիմիր Իլյիչ» բանաստեղծությունը, որն ավարտվում է պարտիան փառաբանող տողերով։

Բանաստեղծ չէի լինի ես,
չերգեի եթե
ՌԿՊ-ի երկինքն անեղը՝
աստղերով հնգաթեռ։

Լենինյան ցիկլի հաջորդ բանաստեղծությունը գրված է Լենինի հիվանդության առիթով և կոչվում է «Մենք չե՛նք հավատում»։ Հետագայում ևս նա անդրադառնում է այդ թեմային, գրելով «Լենինը մեզ հետ է», «Զրույց ընկեր

Լենինի հետ», «Լենինյանները» և այլ բանաստեղծություններ։ Բայց այդ բոլորը սոսկ պատառիկներն են այն մեծ կտավի, որը պոետն ավարտեց 1924 թ. աշնանը. դա հռչակավոր «Վլադիմիր Իլյիչ Լենին» պոեմն է։

Լենինի կերպարը ստեղծելիս բանաստեղծը առաջնորդվում է երկու պլանով՝ Լենինն իրև ամենամարդկային մարդ և միաժամանակ իրև հեղափոխության ղեկավար։ Համաժողովրդական սգի ցնցող պատկերն ամեն մեկի մեջ բնական հարց է առաջացնում.

Ո՞նչ է արել նա։
Ո՞րտեղից է,
ո՞վ—
մարդն այդ ամենամարդկային։

Այս հարցի պատասխանը կազմում է Մայակովսկու պոեմի բովանդակությունը, որովհետև դա շարքային քաղաքացի Ուլյանովի կյանքի պատմությունը չէ, այլ հեղափոխության առաջնորդի կյանքի պատմությունը, որը միահյուսվում է բանվոր դասակարգի ազատագրական շարժման պատմության հետ։

Պոեմի առաջին մասում Մայակովսկին պատմում է բուրժուական հասարակարգի կողմից ֆեոդալիզմի տապալման, կապիտալիստական տնտեսակարգի անբաժան ուղեկիցների՝ գերարտադրության, ճգնաժամերի, բանվորների զործազրկության մասին, կերտելով սոցիալիստական հեղափոխությամբ հղի կապիտալիզմի պերճախոս պատկերը։ Այնուհետև նա խոսում է մարքսիզմի, Փարիզի կոմունայի, կոմունիզմի «ուրվականի» մասին, պատկերն ավարտելով Լենինի ծնունդով.

Բոլոր պատճառներով այս
Սիմբիրսկի խորքում
սովորական մանուկը—
Լենինն էր ծնվում։

Պոեմի երկրորդ մասը վերարտադրում է հեղափոխական շարժման պատմությունը Լենինի հայրենիքում՝ Ռուսաստանում։ Այստեղ պատկերված են ճորտատիրական կարգերը, նարոդնիկական շարժումը, Լենինի եղբայրը՝ Ալեքսանդրը, աշխատավորների զայրույթի ուժը, Լենինի և հեղափոխական մասսաների գաղափարական-քաղաքական կապը, Արյունոտ կիրակին, հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, 1905 թ. հեղափոխությունը և նրան հաջորդած ռեակցիան, առաջին համաշխարհային պատերազմը, փետրվարյան հեղափոխությունը, ժամանակավոր կառավարության ռեակցիոն քաղաքականությունը, Լենինի Պետրոգրադ ժամանելը և Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը։ Այս մասում է կերտել պոետը Լենինի, պարտիայի ու ժողովրդի միասնության գեղեցիկ պատկերը.

Պարտիան և Լենինը—
երկվորյակ եղբայրներ,
Մայր—պատմության համար
ո՞րն է արժեքավոր ավելի։
Մենք ասում ենք—Լենին,
և պարտիա ենք
հասկանում էլի,
ասում ենք՝
պարտիա—
հասկանում ենք—Լենին։

Հոկտեմբերի հաղթական երթի, Բրեստի հաշտության, ռազմական կոմունիզմի, Նէպի մասին խոսելուց հետո, Մայակովսկին ընթերցողին կրկին վերադարձնում է Լենինի մահվան ցնցող պատկերին։

Պոեմի սկզբում առաջադրված հարցին Մայակովսկին պատասխանում է՝ Լենինը հեղափոխության հայրը և որդին է։ Պոեմն ավարտվում է լենինյան կոչով, այն լավատեսական հավատով, որ Լենինի դրոշը՝ միլիոնների ձեռքով պարզած դրոշը անպարտելի է։ Լենինի մասին պոեմը վերածվում է պոեմի միջազգային և ռուսական հեղափոխական շարժման, սոցիալիզմի դրոշի անպարտելիության մասին։

Եթե «Լենին» պոեմի հիմնական թեման հեղափոխության կազմակերպչի ու առաջնորդի կերպարի կերտումն էր՝ մեծ Հոկտեմբերի նախապատրաստման և իրականացման ֆոնի վրա, ապա 1927 թ. ավարտված «Լավ է» պոեմի թեմատիկան հեղափոխական մասսաների գերի լուսաբանությունն է հոկտեմբերյան դինված ապստամբության ժամանակ և նրա հաղթանակից հետո։ Այն, ինչ պոեմին լիովին չէր հաջողվել «150 000 000» պոեմում, գեղարվեստորեն հաջողվում է այստեղ։ Դա բացատրվում է նրանով, որ Մայակովսկին արդեն անցել էր «Լենին» պոեմի կերտման դպրոցը, գաղափարապես հասունացել և հասել էր մեծ վարպետության։ «Լավ է» պոեմից իրոք հնչում է բազմամիլիոն մասսայի հեղափոխական երգը, ցասկոտ խոսքը, գրոհի ոտնաձայնը։ Մեծ կտավի գեղարվեստական այս երկը միաժամանակ ներկայացնում է սոցիալիստական ռեալիզմի պոետական ձևերի մշակման վիթխարի մի աշխատանք։ Մայակովսկու պոետական վարպետությունն այստեղ բարձր կատարելության է հասնում։

Կոմպոզիցիոն տեսակետից պոեմը բաժանվում է 19 գլուխների, որոնցից յուրաքանչյուրը գաղափարական և գեղագիտական ինքնուրույն ֆունկցիա ունի ամբողջի մեջ։ Առաջին գլուխը բացահայտում է թեման և որոշում այն ռեալիստորեն պատկերելու տեսանկյունը։ II, III և IV գլուխները երգիծական մերկացման մեծ ուժով բացահայտում են Կերենսկու ժամանակավոր կառավարության ներքին և արտաքին քաղաքականության սնանկությունը, որի դեմ աճում է մասսաների դժգոհությունը։ V գլխում տրված սովետների և ժամանակավոր կառավարության սուր հակադրությունը անխուսափելի է դարձնում հոկտեմբերյան դինված ապստամբությունը, որը ծավալվում է պոեմի հաջորդ գլխում։ Այնուհետև Մայակովսկին բանաստեղծական մեծ վարպետությամբ պատկերում է կոմունիստական շարաթօրյակները, սովետական հայրենասիրության վիթխարի ուժը։ Բանաստեղծը մերթ հայրենիքը համեմատում է մարտերում ծնված գարնան հետ, մերթ հիշեցնում մեծ հայրենասեր-հեղափոխականների թողած պատգամները, մերթ պատկերում սոցիալիզմի ուժերի հաղթահանդեսը։ Գնահատելով «Լավ է» պոեմը, Լունաչարսկին նշել է, որ «դա Հոկտեմբերյան հեղափոխությունն է՝ ձուլված բրոնզի մեջ»[8]։

Մայակովսկու վերջին մեծ կտավի ստեղծագործությունը «Ամբողջ ձայնով» պոեմն է, որը հեղինակի մտահղացմամբ պետք է նվիրված լիներ առաջին հեղափոխությանը։ Սակայն անժամանակ մահը թույլ չտվեց այն ավարտելու։ Մայակովսկին հասցրեց գրել միայն նախերգանքը, որն իրրև ամբողջական երկ ամփոփում է նրա անցած 20 տարվա ստեղծագործական ճանապարհը և

[8] В. Катанян, Маяковский. Литературная хроника, 3-е изд., М., 1956, էջ 326:

նույն դերն ունի նրա գրական ժառանգության մեջ, ինչ «Հուշարձանը» Պուշկինի մոտ։

Հիմնական գաղափարը, որն արտահայտվում է այստեղ, այն է, որ Մայակովսկու պոեզիան մի ամբողջ զորաբանակի ուժ ունի, օգնում է կոմունիզմ կառուցողներին, սովորեցնում է ապագա սերունդներին ապրել և պայքարել։ Իր պոեզիային տրված այս ճշմարիտ գնահատականն ամփոփում է նրա տարիների խոհերն ու մտորումները գրականության և արվեստի դերի ու նշանակության մասին։

Դեռ 1918 թ. Մայակովսկին գրել էր «Հրաման արվեստների բանակին», «Պոետ-բանվոր» բանաստեղծությունները, որոնցում պոետական աշխատանքի նշանակությունը հավասարեցրել էր նյութական արժեքների ստեղծմանը։ Քաղաքացիական կռիվներից հետո գրված «Հրաման № 2 արվեստների բանակին» ոտանավորում նա կոչ էր անում գրչակիցներին տալ այնպիսի արվեստ, որը ռևոլուցիկան մաքրի կեղտից։

Հետագա հոդվածներում և բանաստեղծություններում ևս («Ինչպես ոտանավոր պատրաստել», «Իսկ ինչ եք դուք գրում», «Արտասովոր դեպք...», «Սերգեյ Եսենինին», «Ուղերձ պրոլետարական պոետներին», «Առաջնորդողի առաջնորդող», «Զրույց ֆինտեսչի հետ պոեզիայի մասին» և այլն) Մայակովսկին կրկին ու կրկին անդրադառնում է իրեն հուզող հարցին։ Բոլոր այս ելույթներում նա ընդգծում է, որ պոետական ստեղծագործությունը լարված, ծանր տքնություն է, բարդ, պատասխանատու աշխատանք։ Իսկական պոեզիան դրժվարին է, այն նման է ռադիումի ձեռք բերմանը, որի մի գրամի համար պահանջվում է հազարավոր տոննա հանքաքարի վերամշակում։ Պոետը ևս հազարավոր բառեր մի կողմ է թողնում՝ մարդկային հոգու խորքերից պեղելու և գտնելու համար այն միակ բառը, որը կարող է միլիոնների սիրտը հուզել և նրանց շարժման մեջ դնել։ Ահա թե ինչու է նա պոետին համարում ժողովրդի առաջնորդը և միաժամանակ նրա ծառան։

Միշտ հանդես գալով գրականության և կյանքի սերտ կապի, գրականության պարտիականության և ժողովրդայնության դիրքերից, Մայակովսկին գործուն, հեղափոխական պոեզիայի կողմնակից էր։ Նա այնպիսի արվեստ և գրականություն էր պահանջում, որը հավասարազոր է սվինի, որը մարտական զենք է դասակարգի ձեռքին. յուրայինների համար՝ փաղաքշանք և լողունգ, իսկ թշնամու համար՝ սվին և մտրակ։ Պոեզիայի այս լեզվով է Մայակովսկին խոսում այսօր նոր սերնդի հետ, ինչպես ապրողն ապրողի հետ։

ПЕВЕЦ ВЕЛИКИХ ИДЕЙ

(К 70-летию со дня рождения В. В. Маяковского)

П. Т. СААКЯН

(Резюме)

Владимир Владимирович Маяковский — величайший поэт третьего, пролетарского периода освободительного движения в России, крупнейший представитель поэзии социалистического реализма, целиком и полностью отдавший свой громозвучный голос «атакующему классу».

Получив политическую закалку в большевистском подполье, он еще в дореволюционный период освоил правильное отношение к действительности и отличался «пафосом социалиста», желающего «делать социалистическое искусство». Эта твердая идейная основа дает Маяковскому возможность преодолеть влияние господствовавших упадочнических литературных течений и выйти в лучших стихотворениях, «Гимнах», поэмах на широкую дорогу самобытного реалистического творчества. Гуманист Маяковский становится глашатаем мятежных стремлений «безъязыкой улицы», ее страстного протеста против буржуазного общества, крушение которого поэт предсказывает в поэме «Облако в штанах».

После Октябрьской революции творчество Маяковского отражает размах борьбы за ликвидацию всего старого, пафос битвы за новое и радость свободного человека («Наш марш», «Ода революции», «Левый марш», «Мистерия Буфф», «150 000 000»). Особо следует отметить его неутомимую, поистине новаторскую творческую работу в «Окнах РОСТА», имевшую огромное значение для идейно-художественного роста поэта и для действенной революционной пропаганды нашей партии. В восстановительный и реконструктивный период страны творчество Маяковского движется в основном по трем тематическим линиям: обличение международного империализма (заграничный цикл стихотворений), сатирическое бичевание пороков и недостатков в нашей жизни (сатирические стихи, «Клоп», «Баня»), воспевание завоеваний революции и ее великого вождя Ленина, движения к коммунизму (многочисленные стихотворения, поэмы «Владимир Ильич Ленин», «Хорошо!»).

Мировая слава Маяковского есть по существу признание всемирного значения Великой Октябрьской социалистической революции.